

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՆԱ-ԳՀԾՁԲ-20/13**

ք. Երևան

«13» մարտի 2020թ.

Հանրապետության նախագահի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Ա. Մնացականյանի, որը գործում է Հանրապետության նախագահի աշխատակազմի կանոնադրության և Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի 28.12.2018թ.-ի Հ-388-Ա հրամանի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### **3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է ոչ ավել, քան 5500000 (հինգ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման միավորի գները կայուն են և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

Պայմանագրի N 1 հավելվածի գնացուցակում նշված են ՄԳ/ՆԳxԾ բանաձևով հաշվարկված գները:

### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 42 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հանրապետության նախագահի աշխատակազմ  
ք. Երևան, Մարշալ Բաղդամյան պողոտա 26/1  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն  
Հ/Կ 900011204089  
ՀՎՀՀ 00006505

/Ա. Արմազակյան/  
Կ.Տ



### Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«ՋԻԷՆՋԻՔԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ  
ք.Երևան, ք. Երևան, Արշակունյաց 119/12  
«Ակրա-Ազրիկո Բանկ» ՓԲԸ  
Հ/Կ 220503330384000

Հ/Կ 01271541



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Ձ դրամ

Ծառայության							մատուցման	
հրավերով նախատեսված չափարածնի համարը	միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/«Ձ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը	
1	50111130/2	Տոյոտա Քեմրի 2.4 (2008թ.) TOYOTA CAMRY ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	400000	1	Կատարողի տեխնիկական սպասարկման կայանում /ք. Երևան/	Ծառայությունների մատուցման սկիզբը՝ ոչ ուշ, քան 21-րդ օրը՝ հաշված պայմանագրով նախատեսված կողմերի հրավումքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը	
2	50111130/1	Հոնդա Սիվր-Վի 2.4 (2012թ.) HONDA CR-V ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	600000	1			
3	50111130/9	Տոյոտա Կորոլա 1.4 (2008-2011թ.) TOYOTA COROLLA ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	700000	1			
4	50111130/6	ԿիԱ Սերատո 1.6 (2012-2013թ.) KIA CERATO ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	800000	1			

5	50111130/8	Հյունդաի Էլանտրա 2.0 (2009թ.) HYUNDAI Elantra 2.0 ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	300000	1		
6	50111130/3	Նիսսան Տիդա 1.6 (2008թ.) NISSAN TIIDA ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	600000	1		
7	50111130/4	Հյունդաի Տուկսոն 2.4 (2011թ.) HYUNDAI TUCSON IX35 2.4 ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	1400000	1		
8	50111130/5	Հյունդաի Էլանտրա 1.8 (2011թ.) HYUNDAI Elantra ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	300000	1		
9	50111130/7	Տոյոտա Կորոլլա 1.6 (2012-2013թ.) TOYOTA COROLLA ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ համաձայն ստորև ներկայացված առանձին տեսակի ծառայությունների և դրանց գների:	դրամ	400000	1		

ԳՆԱՑՈՒՑԱԿ

Տրանսպորտային միջոցների մակերիշերտ/տեսակները/ և նույնացման համարները՝ ըստ չափաբաժինների									
1-ին չափաբաժին	2-րդ չափաբաժին	3-րդ չափաբաժին	4-րդ չափաբաժին	5-րդ չափաբաժին	6-րդ չափաբաժին	7-րդ չափաբաժին	8-րդ չափաբաժին	9-րդ չափաբաժին	
Տոյոտա ֆեմի 2.4 (2008թ.) TOYOTA CAMRY	Հոնդա Սիվր-Վի 2.4 (2012թ.) HONDA CR-V	Տոյոտա Կորոլա 1.4 (2008-2011թ.) TOYOTA COROLLA	ԿԻԱ Սերատո 1.6 (2012-2013թ.) KIA CERATO	Հյունդայի Էլանտրա 2.0 (2009թ.) HYUNDAI Elantra 2.0	Նիսսան Տիրա 1.6 (2008թ.) NISSAN TIIDA	Հյունդայի Տուկսոն 2.4 (2011թ.) HYUNDAI TUCSON IX35 2.4	Հյունդայի Էլանտրա (2011թ.) HYUNDAI Elantra	Տոյոտա Կորոլա 1.6 (2012-2013թ.) TOYOTA COROLLA	
JTNBE40K703185855	5J6RM4850DL700988	JTNBM58E8X0J008577	KNAFX411BE5835138 KNAFT411BC5974398 KNAFT411BE5851161 KNAFX411BE5866919	KMHHDH41EBFCU370108	JNICC1DX9T000324 JNICC1D79T000281 JNICC1D99T000458	KMHJY81CDCU442715	KMHDU41DBAU854479	NMTBR4JE20R030942 JTNBV58E80J201870	
<b>Հ/Հ</b>									
<b>1</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>4</b>	<b>5</b>	<b>6</b>	<b>7</b>	<b>8</b>	<b>10</b>	<b>11</b>
Մեկ միավորի համար նախատեսված գներ* - գնացուցակ / ՀՀ դրամ/									
Բռնկման համակարգի ստուգում	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
Կցորդման համակարգի ստուգում	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500









78	Վառելիքի բաքի հանում և սեղաբրում կամ փոխարինում	12000	13500	12000	11000	11000	11000	11000	11000	13500	12000	12000
79	Վառելիքի բաքի մաքրում	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500
80	Օդի ծախսի սվիչի փոխարինում	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	9000	8500	8500
81	Ջրի ջերմաստիճանի սվիչի փոխարինում	7500	7500	7500	7500	7500	7500	7500	7500	7500	7500	7500
82	Ջրի խողովակի, փողոակի փոխարինում	5000	6000	5000	5000	5000	5000	5000	5000	6000	5000	5000
83	Բենզոբաքի բենզոմոլիչի ցանցի փոխարինում	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
84	Բենզոբաքի բենզոմոլիչի ցանցի մաքրում	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
85	Յուղի ճնշման սվիչի փոխարինում	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
86	Տվիչի փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
87	Ակսիլատորի փոխարինում կամ նորոգում	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
88	Օդազտիչի իրանի փոխարինում	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000	1000
89	Էլ.բենզոմոլիչի կախցի փոխարինում	500	500	500	500	500	500	500	500	500	500	500
<b>3. Սառեցման և արտաձման համակարգ</b>												
90	Հովիարի փոխարինում	11000	12000	11000	11000	11000	11000	11000	11000	12000	11000	11000
91	Հովիարի փոկի հանում և սեղաբրում կամ փոխարինում	6000	7000	6000	6000	6000	6000	6000	6000	7000	6000	6000
92	Ռադիատորի հանում և սեղաբրում կամ փոխարինում	10000	11000	10000	10000	10000	10000	10000	10000	11000	10000	10000
93	Ռադիատորի նորոգում	20000	21500	20000	20000	20000	20000	20000	20000	21500	20000	20000
96	Ընդարձակող բաքի փոխարինում	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
97	Ընդարձակող բաքի փողոակի փոխարինում	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500

98	Ջրի ծորակի փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
99	Հովացման համակարգի ռեսուրսներ փոխարինում	4000	5000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
100	Հովիտների շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000	7000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
101	Վատարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000
102	Վատարանի ռադիատորի նորոգում	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500
103	Վատարանի շարժիչի փոխարինում	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500	22500
104	Ջեռուցիչի էլ.ծորակի փոխարինում	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
105	Ջեռուցիչի իրանի փոխարինում	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
106	Թերմոստատի փոխարինում	9000	9500	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000	9000
107	Ջրի մոլիչի փոխարինում միջադիրով	8000	9000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
108	Ջրի մոլիչի միջադիրի փոխարինում	8000	9000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
109	Գեներատորի փոկի փոխարինում	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
110	Գեներատորի փոկի ձգող հորվակի փոխարինում	4000	4500	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
111	Ջրի ռադիատորի վերանորոգում	20000	21500	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000	20000
112	Թերմոստատի միջադիրի փոխարինում	5000	7500	5000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000
114	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
115	Խլարարի անոթի (xայր) փոխարինում	750	750	750	750	750	750	750	750	750	750	750	750

116	Խլարարի ներդրի փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000	2000
117	Խլարարի կախոցի փոխարինում	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
118	Հովանան հերուկի փոխարինում	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
119	Դիֆուզորի փոխարինում	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
120	Կոնդիցիոների լիցքավորում	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500	8500
122	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000	8000
123	Կոնդիցիոների ռադիատորի փոփոխակի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
124	Կոնդիցիոների առանցքակալի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
125	Կոնդիցիոների ռադիատորի հանում և տեղադրում	10000	10500	10000	10000	10000	10000	10000	10000	10500	10000	10000	10000	10000
126	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում	4000	5000	4000	4000	4000	4000	4000	4000	5000	4000	4000	4000	4000
<b>4. Փոխանցման տուփ</b>														
127	Փոխանցման տուփի յուղի գտիչի փոխարինում	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000
128	Փոխանցման տուփի յուղի փոխարինում	9000	10000	9000	9000	9000	9000	9000	9000	10000	9000	9000	9000	9000
<b>5. Բաշխիչ տուփ</b>														
129	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում		37500							40000				
130	Բաշխիչ լիտերի ատամնանիակի փոխարինում		22500							22500				
131	ԲՏ-ի ելուստի փոխարինում /Ֆլանեց/		7500							7500				
132	ԲՏ-ի արգելակման թմբուկի փոխարինում													







204	Աջ կամ ձախ դարձվեն լծակի փոխարինում	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250	4250
<b>8. Ղեկային մեխանիզմ</b>																				
205	Ղեկայունակի հիմնական նորոգում,	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500	37500
213	Ղեկային կայունի ձգանների փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
214	Ղեկային կայունի միջին ձգանի փոխարինում	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
216	ՂԿ-ի հողակալերի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
217	Հիդրոմեղարարի մղիչի փոխարինում	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
218	Հիդրոմեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000	10000
219	Հիդրոմեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750
220	Հիդրոմեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000
221	Հիդրոմեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000	7000
223	Ղեկային ձգանողի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
224	Ղեկային ծողի գնդե հողակալի նորոգում	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500	2500
225	Ղեկային ձգանողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
226	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500	1500



244	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	6500	7000	6500	6500	6500	6500	6500	6500	7000	6500	6500	6500
245	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	6500	7000	6500	6500	6500	6500	6500	6500	7000	6500	6500	6500
246	Արգելակային փողոակի փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000	5000
247	Արգելակային կոճղակների փոխարինում	3000	3500	3000	3000	3000	3000	3000	3000	3500	3000	3000	3000
248	Արգելակային համակարգի օդահանում	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
250	Ընթրոկային կոճղակների փոխարինում	3000	3500	3000	3000	3000	3000	3000	3000	3500	3000	3000	3000
253	Առջևի արգելակային սկավարակի փոխարինում	5000	6000	5000	5000	5000	5000	5000	5000	6000	5000	5000	5000
254	Առջևի արգելակային սկավարակների հոկում 1 հատ	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
255	Հետևի արգելակային սկավարակի փոխարինում	5000	6000	5000	5000	5000	5000	5000	5000	6000	5000	5000	5000
256	Հետևի արգելակային թմբուկի հոկում 1հատ	500	500	500	500	500	500	500	500	500	500	500	500
257	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000	4000
